

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության» և «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների իրականացվելիք գործողությունների ծրագրի» նախագծերի վերաբերյալ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել են «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարության» և «Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների իրականացվելիք գործողությունների ծրագրի» նախագծերը, որոնց վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

1. Ռազմավարության նախագծի 3-րդ կետում նշված է, որ «...ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ ընդունվել է ՊՖԿՀ բարեփոխումների վերանայված՝ 2016-2020թթ. ռազմավարությունը (ՊՖԿՀԲ երկրորդ ռազմավարությունը):» Չկա որևէ բացատրություն, թե ինչու առանց ավարտին հասցնելու նշված ռազմավարությունը, որոշվել է սկսել ՊՖԿՀ նոր ռազմավարություն՝ իր գործողությունների ծրագրով: Բնականաբար, չկա նաև այդ ռազմավարության կատարման գնահատականը:

Առաջարկություն

Ռազմավարության «Ներածություն» բաժնում ներկայացնել ՊՖԿՀԲ երկրորդ ռազմավարության իրականացման գնահատականը՝ նշելով նաև այն պատճառները, որոնց հետևանքով որոշվել էր մինչև այն ավարտին հասցնելը սկսել նոր, ՊՖԿՀԲ երրորդ ռազմավարության իրականացումը:

2. Ռազմավարության 8-րդ բաժնի (Ռազմավարական պլանավորում, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և պետական բյուջեի կազմում) Բաղադրիչ 5-ի (Ծրագրային բյուջետավորում) Կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշը (Ցուցանիշ 18) իր բնույթով արդյունքային ցուցանիշ չէ, քանի որ այդպիսի ցուցանիշը ենթադրում է կոնկրետ, շոշափելի և չափելի արդյունք (ինչպիսիք են Ռազմավարության այլ արդյունքային ցուցանիշների մեծ մասը):

Առաջարկություն

Որպես Ցուցանիշ 18 սահմանել կոնկրետ և չափելի կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշ:

- Մեր կազմակերպության կողմից իրականացվող ծրագրային բյուջետավորման ներդրման մոնիտորինգը վեր հանեց ճյուղային նախարարությունների մեծ մասի աշխատակազմերի համապատասխան բաժինների անբավարար կարողությունները՝ լինելու համարժեք ծրագրային բյուջետավորման համակարգի պահանջներին:

Առաջարկություն

Ռազմավարության Թիրախ 16-ի 4-րդ միջոցառման մեջ մարդկային ռեսուրսների տակ կոնկրետացնել ճյուղային նախարարությունների մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված միջոցառումները:

- Բյուջետային ծրագրերի իրականացման ընթացքում, մանավանդ ծրագրային բյուջետավորման ներդրման ներկա, սկզբնական փուլում, հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ ծրագրի կատարման գնահատումը կարող է վեր հանել դրա իրականացման այնպիսի անարդյունավետություն կամ այլ տեսակի թերություններ, ինչպես նաև օբյեկտիվ պատճառներով պայմանավորված փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել ծրագրի՝ նախապես պլանավորված տեսքով և բյուջեով իրականացման անհնարինությունը:

Առաջարկություն

Ռազմավարության Թիրախ 17-ի երկրորդ միջոցառման մեջ որպես առանձին քայլ նախատեսել նաև ծրագրերի վերանայման և դրա արդյունքում այն փոփոխելու հնարավորությունը:

- Բաղադրիչ 15-ի (Պետական գնումներ) առկա իրավիճակի նկարագրության և խնդիրների մեջ արդարացիորեն նշվում է, որ «... Համաշխարհային Բանկի գնահատմամբ էլեկտրոնային գնումների համակարգը տեխնիկական և ֆունկցիոնալ առումով չի համապատասխանում ինչպես ժամանակակից, այնպես էլ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆունկցիոնալ պահանջներին:» Միևնույն ժամանակ, ոչ այդ բաժնում, և ոչ էլ այլ տեղ չի կոնկրետացվում, թե ինչ պահանջների մասին է խոսքը:

Առաջարկություն

Սահմանել Բաղադրիչ 15-ի կատարողականի վերջնական արդյունքային ցուցանիշներ, որոնք կոնկրետ ցույց կտան այն արդյունքները, որոնց հասնելու դեպքում կունենանք էլեկտրոնային գնումների՝ ֆունկցիոնալ առումով ժամանակակից և ՀՀ օրենսդրությամբ համապատասխանող համակարգ:

- Բաղադրիչ 17-ում (որի վերնագիրն անհասկանալի է, բայց հետագա շարադրանքից երևում է, որ խոսքը գնում է գնումների բողոքարկման համակարգի մասին) առկա իրավիճակի նկարագրության մեջ արդարացիորեն նշվում է, որ գնումների արտադատական բողոքարկման համակարգը արդյունավետ չէ՝ հիմնականում

պայմանավորված բողոքներ քննող անձանց գործունեությամբ: Ինչպես երևում է Թիրախ 34-ի միջոցառումից որպես լուծում առաջարկվում է գնումների հետ կապված բողոքների քննում *միայն* դատարանների կողմից, ինչը նշանակում է գնումների արտադատական համակարգի վերացում: Գտնում ենք, որ գնումների ներկայիս արտադատական համակարգի թերությունները դեռևս չեն նշանակում, որ ընդհանրապես հնարավոր չէ ունենալ իրապես անկախ և արդյունավետ այդպիսի համակարգ և միջազգային փորձը նույնպես վկայում է, որ այդպիսի արդյունավետ և անկախ համակարգերի առկայության մասին:

Առաջարկություն

Թիրախ 34-ում որպես միջոցառման իրականացմանն ուղղված քայլ ներառել նաև Հայաստանում գնումների բողոքարկման սկզբունքորեն նոր արտադատական համակարգի ներդրումը:

7. Ռազմավարության վերջին, 22-րդ բաժնում (Հանրային մասնակցություն և հաղորդակցություն) իրականում խոսքը գնում է միայն հաղորդակցության մասին և ոչ մի խոսք չկա հանրային մասնակցության մասին: Այնինչ Հայաստանում արդեն կան զգալի թվով քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ԶՀԿ), որոնք ունեն բավարար կարողություններ՝ ներգրավվելու Ռազմավարության և նրա իրականացման գործողությունների ծրագրի միջոցառումների մոնիտորինգ և գնահատում իրականացնելու համար,։ Այդպիսի մոնիտորինգի և գնահատման արդյունքները կարող են եապես բարելավել Ռազմավարության և նրա իրականացման գործողությունների արդյունավետությունը և դրանով իսկ խթանելու այդպիսի ԶՀԿ-երի և համապատասխան պետական մարմինների միջև համագործակցությունը:

Առաջարկություն

Ռազմավարության նշված բաժնում ներառել նաև համապատասխան պետական մարմինների և ԶՀԿ-երի միջև համագործակցությանը վերաբերող դրույթներ:

8. Չնայած նրան, որ որպես կառավարության հանձնառություն նշված է նաև «Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում կոռուպցիոն երևույթները ծնող պատճառների վերահսկման և վերջիններիս վերացմանը կամ չեզոքացմանն ուղղված գործողությունների իրականացում» հանձնառությունը (տե՛ս 3-րդ բաժնի 13) հանձնառությունը), Ռազմավարության հետագա շարադրանքում դրա իրականացման մասին որևէ դրույթ առկա չէ:

Առաջարկություն

Ռազմավարության մեջ առանձին բաժնով ներառել կոռուպցիոն ռիսկերի կանոնավոր վերհանմանը, ուսումնասիրությանը, վերահսկմանը և չեզոքացմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցառումներ: